Արձանագրություն թիվ 3

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքում 07. 10. 2021 թ. կայացած <<Գրիգներս>> ՍՊԸ-ի կողմից նախատեսվող Արթիկի տուֆերի հանքավայրի օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ հանրային 3-րդ քննարկումների

07.10.2021թ. *ք. Արթիկ*

<<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> ՀՀ օրենքի /21.06.2014թ. ՀՕ-110-Ն/, ինչպես նաև ՀՀ կառավարության 19.11.2014թ. N 1325-Ն որոշմամբ սահմանված կարգով 2021 թվականի հոկտեմբերի 7-ին ժամը 11:00-ին ՀՀ Շիրակի մարզի Արթիկի համայնքապետարանում տեղի ունեցավ <<Գրիգներս>> ՍՊԸ-ի կողմից նախատեսվող Արթիկի տուֆերի հանքավայրի օգտակար հանածոյի անդյունահանման աշխատանքների՝ շրջակա մրջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ հանրային 3-րդ քննարկումները:

Հանրային քննարկմանը **մասնակցում էին** Արթիկի համայնքի ղեկավարի խորհրդական Գ. Փթուկյանը, <<Գրիգներս>> ՍՊԸ-ի տնօրեն Ն. Վարդանյանը, Արթիկ համայնքի ավագանու անդամ՝ Ռ. Վարդանյանը, Արթիկի համայնքապետարանի քաղաքաշինության բաժնի մասնագետներ, համայնքի բնակիչներ:

Նիստը վարում էր՝

Արթիկ համայնքի ղեկավարի խորհրդական Գ. Փթուկյանը: Նա մասնակիցներին ներկայացրեց հանդիպման օրակարգը. <<Գրիգներս>> ՍՊԸ-ի տնօրենն Արթիկ համայնքի վարչական սահմանում, մասնավորապես Տուֆագործների փողոց 105 հասցեում 10,31042 հա մակերեսով հանքավայրում ցանկանում է կազմակերպել տուֆ քարի արդյունահանում: Այսօր նախատեսվող գործունեության համար <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> ՀՀ օրենքի պահանջներով անցկացվում են հանրային քննարկումների 3-րդ փուլը:

Ելույթ ունեցան.

1. Արթիկի ավագանու անդամ Ռ. Վարդանյանը ասաց, որ վերոնշյալ հանքավայրերը նախկինում շահագործվել են <<Արթիկ Տուֆ>> ընկերության կողմից, սակայն ընկերության սնանկացումից հետո դրանցում դադարել է քարի արդյունահանումը: Այդ տարածքներն այժմ կրկին համայնքինն են, և համայնքի բնակիչները դրական են գնահատում հանքավայրերի վերաշահագործումը: Հանքավայրերը շահագործող կազմակերպությունը բարեկարգվելու է նաև Արթիկի անտառներ տանող ճանապարհը, որի երկայնքով ծառատունկ է իականացվելու: Տուֆ քարի արդյունահանման աշխատանքների ընթացքում աշխատելու է ջրցան մեքենա՝ առաջացած փոշու արտանետումները պակասեցնելու նպատակով, իրականացվելու են բնապահպանական բոլոր անհրաժեշտ միջոցառումները: Որպես ավագանի նա շեշտեց, որ ինքը և համայնքի բնակիչները շահագրգռված են, որ հանքարդյունաբերությունը համայնքում զարգանա, ստեղծվեն նոր աշխատատեղեր: Նա խնդրեց մասնակիցներին ակտիվ լինել և բարձրացնել հուզող բոլոր հարցերը:

Մասնակիցների կողմից հարցեր չհնչեցին.

Նիստը վարող Գ. Փթուկյանը, ամփոփելով հանրային քննարկումը, դրական գնահատեց նախաձեռնող կողմի՝ ներդրումներ կատարելու, ինչպես նաև բնապահպանական կանխարգելիչ միջոցառումներին մեծապես ուշադրության անժանացնելու պատրաստակամությունը: Նա նշեց, որ հանրային քննարկումների նախկին երկու փուլերում բնակիչների կողմից հավանաբար հնչեցվել են հուզող հարցերը և դրանց տրվել են սպառիչ պատասխաններ, այդ պատճառով բնական է համարում հարցերի բացակայությունը: Նա շնորհակալություն հայտնեց մասնակիցներին ներկա գտնվելու համար, իսկ ծրագրի նախաձեռնող կազմակերպությանը՝ հետագա հաջողություններ:

Նիստը վարող՝
Արթիկ համայնքի ղեկավարի կողմից լիազորված անձ
հանրային քննարկման պատասխանատու
համայնքի ղեկավարի խորհրդան՝ _____ Գ. Փթուկյան

Հանրային քննարկումների արձանագրող՝ _____ Տ. Զարչյան

<<Գրիգներս>> ՍՊԸ-ի տնօրեն՝ _____ Ն.Վարդանյան

Հանրային քննարկման մասնակիցների ցանկը կցվում է արձանագրությանը:

«Գրիգներս» ՍՊԸ կողմից նախատեսվող Շիրակի մարզի Արթիկի տուֆերի հանքավայրի օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ հանրային քննարկումների 3-րդ փուլի մասնակիցների

ՑՈՒՑԱԿ

07.10.2021 թ. ժամը 11:00-ին **Արթիկի համայնքապետարան**

Հ/Հ	Ֆիզիկական/իրավաբանական անձի անուն ազգանունը	Հեռախոսահամարը	Զբաղվածությունը	Ստորագրությունը
1	Գևորգ Գրիգորյան	094 876700		
2	Գրիգոր Գրիգորյան	094 898969	Գեոլոգ	
3	Տիգրան Հովհաննիսյան	094-47-48-93		
4	Լևոն Գրիգորյան	093 49 48 48		
5	Արարատ Հարությունյան	077 411-481		
6	Ռուբեն Գրիգորյան	094 44-54-00	տնտ. ավագանի	
7	Գուրգեն Մարտիրոսյան	098-44-50-55		
8	Գևորգ Դավթյան	094 136527	քաղաքաց. բնակիչ	
9	Գուրգենյան Հերան	093 01 1203	գյուղատնտես	
10	Մարիետա Գրիգորյան	077852021	Կ. Նալբանդյանի անվան	
11				
12				
13				
14				
15				
16				
17				
18				
19				
20				
21				
22				